

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՐԴԱՐԱՏՄԱՆ ԴԱՏԱՎՃՌԻ ՄԱՍԻՆ

Ռ. Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Դատավճիռն այն ակտն է, որով հանրագումարի է բերվում քրեական դրոժի ամբողջ բնությունը: Դատավճիռ կայացնելը պայմանավորված է սովետական քրեական դատավարության խնդիրներով: Այդ խնդիրներն արձանագրված են Քր. դատ. օր.-ի 2-րդ հոդվածում: Դրանք են՝ «հանցագործությունների արագ և լրիվ բացահայտումը, հանցավորների մեղադրումը և օրենքի ճիշտ կիրառման ապահովումը այն հաշվով, որպեսզի հանցագործություն կատարած յուրաքանչյուր ոք ենթարկվի արդարացի պատժի, և ոչ մի անմեղ մարդ քրեական պատասխանատվության չենթարկվի ու չդատապարտվի»*:

Այդ խնդիրներին են ծառայում մեր քրեական դատավարության բոլոր ձևերն ու ինստիտուտները, սովետական դատարանի, դատախազության, բննչական և հետաքննական մարմինների ջանքերը:

Սովետական քրեական դատավարության խնդիրները ապահովվում են, երբ հանցագործը մերկացվում է և կրում օրինական պատիժ և երբ դատարանն անմեղ մարդուն պաշտպանում է անիրավացի մեղադրանքից: Հետևաբար, դատարանի խնդիրն է ոչ միայն պատժել մեղավորներին, այլև քաղաքացիներին պաշտպանել անհիմն մեղադրանքներից:

Սովետական դատարանին խորթ են բուրժուական արդարադատության սկզբունքները, բուրժուական իրավագետների կողմից, դատարաններին հրամսելով տեսական դրույթները:

Ֆրանսիական բուրժուական իրավագետ Ֆոկոնենն իր «Պատասխանատվություն» աշխատության մեջ նշում է, որ քրեական գործերով ճշմարտությունը պարզելը բուրժուական արդարադատության խնդիրը չէ, որ պարտադիր չէ պատժի ենթարկել այն անձին, որն իրական հանցագործն է: Նրա կարծիքով, լրիվ հնարավոր է բավարարվել այլ անձով, որը կարող է լինել առավել հարմար «փոխարինող»: Ֆոկոնենն գտնում է, որ, եթե հանցագործությունը կատարված է, և հսկական հանցագործը չի հայտնաբերված, ապա հանցագործությունը անպատիժ չթողնելու համար միշտ կարելի է որևէ մեկին մեղավոր դարձնել: Նման մոտեցումը խորթ է սոցիալիստական արդարադատությանը և իրավագիտությանը: Սովետական սոցիալիստական օրինականության պայմաններում ճշմարտացի դատավճիռ կայացնելը անսասան պահանջ է:

Քրեական դատավարության խնդիրները կտրական ու որոշակի են դարձնում օրենքի այն պահանջը, որ դատավճիռը հանդես է գալիս միայն երկու ձևերով. ա) մեղադրական դատավճիռ, բ) արդարացման դատավճիռ:

* Այստեղ և այսուհետև բերվում են ՀՍՍՀ Քրեական դատավարության օրենսգրքի հոդվածները:

Սովետական դատարանի արդարացման դատավճռի հիմքերի վերլուծությունն ճիշտ կատարելու համար յուրաքանչյուր իրավաբան, դատավոր կա՞ն իրավագետ ուետք է պատկերացնի դատավճռի բնորոշումն ընդհանրապես:

Դատավճիռ է կոչվում դատարանի կողմից դատական նիստում, հանուն ՍՍՀՄ-ի կամ միութենական հանրապետության, կայացված որոշումը ամբաստանյալի մեղավորության կամ անմեղության վերաբերյալ, մեղավորությունն ապացուցված գտնելու (ճանաչելու) դեպքում՝ ամբաստանյալի նկատմամբ պատիժ կիրառելու վերաբերյալ:

Այստեղից էլ կարելի է հետևյալ կերպ ընդհանրացման դատավճիռը:

Արդարացման դատավճիռը՝ դատական նիստում հանուն ՍՍՀՄ-ի կամ միութենական հանրապետության կայացված որոշումն է ամբաստանյալի անմեղության, նրան անպարտ ու արդարացված ճանաչելու վերաբերյալ:

Քրեական դատավարության օրենսգրքի 299-րդ հոդվածը սահմանում է արդարացման դատավճիռ կայացնելու ներքոհիշյալ հիմքերը. 1) երբ չի հաստատված հանցագործության դեպքը. 2) երբ ամբաստանյալի արարքի մեջ չկա հանցակազմ. 3) երբ չի ապացուցված ամբաստանյալի մասնակցությունը հանցագործության կատարմանը:

Բոլոր վերոհիշյալ հիմքերով ամբաստանյալը պետության անունից ճանաչվում է անմեղ՝ անպարտ, դատարանով արդարացված: Քննարկենք արդարացման դատավճռի այդ հիմքերը:

Ա. երբ չի հաստատված հանցագործության դեպքը. այս հիմքով դատավճիռ է կայացվում, երբ հանցագործության դեպքը դատարանը գտնում է չհաստատված: Իսկ երբ հանցագործության դեպքը չի հաստատված, խոսք լինել չի կարող նաև ամբաստանյալի մեղավորության մասին: Օրենքում նշված այս հիմքը, ըստ էության, նշանակում է դատարանի կողմից դատավճռով բացասական պատասխան տալ ՀՍՀՄ Գ. դատ. օր.-ի 294-րդ հոդվածի առաջին կետով առաջադրված հարցին. «Տեղի ունեցե՞լ է արդյոք այն արարքը, որի կատարման մեջ մեղավորվում է ամբաստանյալը»:

Երբ դատարանը իր դատավճռով բացասական պատասխան է տալիս այդ հարցին, դադարեցվում է նշված հոդվածով նախատեսված մյուս հարցերի քննարկումը, քանի որ այն դառնում է առարկայազուրկ:

Կայացնելով արդարացման դատավճիռ այս հիմքով, դատարանը հատարում է, որ չի հաստատված այն արարքը, որի կատարման համար դատի է տրված ամբաստանյալը: Հանցագործության դեպքի առկայությունը բացասական պատասխան տալով՝ մերժվում են նաև ամբաստանյալի մեղավորությունը վերաբերող բոլոր հարցերը: Հանցագործության դեպքի չհաստատվելը նշանակում է ապացուցված ճանաչել ամբաստանյալի անմեղությունը:

Արդարացման այս հիմքի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ հանցագործության դեպքի բացակայությունը բացառում է ոչ միայն դատի տրված անձի մեղավորությունը, այլ նաև որևէ այլ անձի մեղավորությունը՝ տվյալ գործով:

Սովետական իրավագետ Ֆ. Ն. Ֆատկուլինը իր «Մեղադրանքը և դատարանի դատավճիռը» մենագրության մեջ հայտնում է այն կարծիքը, որ երբ հնարավոր չէ անվերապահորեն լուծել հանցագործության դեպքի բացակայության կամ գոյության խնդիրը, արդարացման դատավճիռը պետք է կա-

յացվի ոչ թե հանցագործության դեպքը հաստատված չլինելու, այլ օրենքում նշված այլ ամբաստանյալի մասնակցությունը հանցագործության կատարմանը ապացուցված չլինելու հիմքով:

Նա այսպիսի օրինակ է բերում:

Ս-ն դատի է տրվել քաղաքացի Ռ-ի զրպանից դրամապանակը գողանալու համար: Դատարանը ապացուցված չի գտել զրպանահատության փաստը. քանի որ տուժողը եղել է խիստ հարբած, մի քանի ժամ թափառել է զբոսայգում, երկու անգամ պառկել է, մի քանի անգամ հանել է բաճկոնը և այդ պայմաններում բացառված չէ, որ նա դրամապանակը կորցրել է:

Արդարացման այս դեպքը Ֆ. Ն. Ֆատկուլինը դիտում է ոչ թե որպես արդարացում հանցագործության դեպքը հաստատված չլինելու հիմքով, այլ, ըստ էության, որպես արդարացում ամբաստանյալի մասնակցությունը հանցագործության կատարմանը ապացուցված չլինելու հիմքով¹:

Մենք չենք բաժանում Ֆ. Ն. Ֆատկուլինի այս կարծիքը, քանի որ այն չի բխում դործող քրեական դատավարական օրենքի պահանջներից: Բացի այդ, նման մեկնաբանումը չի բխում բերված օրինակի իմաստից:

Օրենքում պարզ ասված է, որ արդարացման դատավճիռ է կայացվում այն ժամանակ, երբ չի հաստատված հանցագործության դեպքը: Ֆ. Ն. Ֆատկուլինի բերած օրինակից նույնպես երևում է, որ չի հաստատված հանցագործության դեպքը՝ զրպանահատության փաստը, բայց թե ինչու՞ նման արդարացումը նա չի համարում արդարացում հանցագործության դեպքը հաստատված չլինելու հիմքով, մնում է անհասկանալի և չի բխում օրենքի պահանջից:

Ֆ. Ն. Ֆատկուլինի տեսակետը հնարավոր չէ պաշտպանել նաև այն իմաստով, որ ՌՍՖՍՀ-ի քր. դատ. օր.-ի 309 հ. 3-րդ կետը նշելով հանցագործությունը կատարելու մեջ ամբաստանյալի մասնակցությունը ապացուցված չլինելու փաստը, մեր կարծիքով նկատի ունի, որ արդարացման այս հիմքի դեպքում հանցագործությունը ընդհանրապես կատարված է, սակայն ամբաստանյալի մասնակցությունը չի ապացուցված, իսկ հանցագործության դեպքը հաստատված չլինելու դեպքում օրենսդիրը նկատի ունի, որ հանցագործություն ընդհանրապես չի կատարված:

Բ. Խրբ ամբառանշալի առաջի մեջ չկա հանցակազմ. սովետական քրեական դատավարական օրենսդրությամբ արդարացման դատավճիռ կայացնելու հիմքերից մեկը ամբաստանյալի արարքի մեջ հանցակազմի բացակայությունն է:

Սովետական քրեական դատավարության իրավունքի տեսությունը զրտնում է, որ հանցակազմը այն հատկությունների համակցությունն է, որը բնութագրում է անձի որոշակի արարքը (գործողությունը կամ անգործությունը) որպես հանցագործություն:

Արդարացման այս հիմքը ամենեւին չի նշանակում, որ ամբաստանյալը չի կատարել այն արարքը, որը դարձել է դատական քննության առարկա: Այս հիմքը վկայում է այն մասին, որ այդ արարքը չի առաջացնում կամ ստեղծում հանցակազմ: Այդ արարքում բացակայում է այնպիսի հատկանիշների համակցությունը, որը բնութագրի այն, որպես հանցագործություն:

¹ «Советская юстиция», 1966, № 8.

Այս հիմքով արդարացման դատավճիռ կայացնելիս դատարանը խստիվ կերպով պետք է ղեկավարվի ՀՍՍՀ քր. օր.-ի, ՌՍՖՍՀ քր. օր.-ի 3-րդ և 7-րդ հոդվածների պահանջներով, ըստ որի «Քրեական պատասխանատվության և պատժի ենթակա է միայն հանցագործություն կատարելու մեջ մեղավոր անձը, այսինքն՝ նա, ով դիտավորությամբ կամ անզգուշությամբ կատարել է քրեական օրենքով նախատեսված հանրության համար վտանգավոր արարք»²:

Անալոգիայի կիրառում սովետական քրեական օրենքով չի թույլատրվում: Այս նշանակում է, որ հանցագործություն է համարվում այն արարքը, որը քրեական օրենքով նախատեսված է որպես այդպիսին, իսկ գործող քրեական օրենքը պարզ շարադրում է հանցագործություն հասկացությունը:

«Հանցագործություն է համարվում քրեական օրենքով նախատեսված հանրության համար վտանգավոր այն արարքը (գործողությունը կամ անգործությունը), որն ուղղված է սովետական հասարակական կամ պետական կարգի, տնտեսության սոցիալիստական սիստեմի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների անձի, նրանց քաղաքական, աշխատանքային, գոյքային և այլ իրավունքների դեմ, ինչպես և սոցիալիստական իրավակարգի դեմ ուղղված հանրության համար վտանգավոր ամեն մի այլ արարք: Երբ նախատեսված է քրեական օրենքով:

Հանցագործություն չի համարվում այն գործողությունը կամ անգործությունը, որը թեև ձևականորեն պարունակում է քրեական օրենքով նախատեսված որևէ արարքի հատկանիշներ, սակայն իր նվազ կարևորության պատճառով հասարակական վտանգավորություն չի ներկայացնում»³:

Բոլոր այն դեպքերում, երբ ամբաստանյալի արարքը օրենքով նախատեսված պայմաններում հանցագործություն չէ, երբ արարքը չի համապատասխանում քր. օր.-ի 3-րդ, 7-րդ հոդվածների պահանջներին, դատարանը կայացնում է արդարացման դատավճիռ՝ ամբաստանյալի արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Դատարանը այս հիմքով արդարացման դատավճիռ է կայացնում նաև այն դեպքում, երբ արարքը իր նվազ կարևորության պատճառով հասարակական վտանգավորություն չի ներկայացնում, չնայած ձևականորեն պարունակում է քրեական օրենքով նախատեսված արարքի հատկանիշներ:

Ամբաստանյալի կողմից արարքը կարող է կատարվել ՀՍՍՀ քրեական օրենսգրքի 3, 14 հոդվածներով նախատեսված՝ 1. անհրաժեշտ պաշտպանության պայմաններում, 2. ծայրահեղ անհրաժեշտության պայմաններում:

Այս երկու դեպքերում նույնպես դատարանը կայացնում է արդարացման դատավճիռ՝ ամբաստանյալի արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ, քանի որ.

1. Այն գործողությունը, որը կատարվել է անհրաժեշտ պաշտպանության պայմաններում՝ այսինքն սովետական պետության շահերի, հանրային շահերի, պաշտպանվողի կամ մի այլ անհատի կամ իրավունքների դեմ հանրայնորեն վտանգավոր ոտնձգություն կատարողին վնաս պատճառելու միջոցով պաշտպանվելու ժամանակ, եթե միայն թույլ չի տրվել անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցում չի համարվում հանցագործություն:

² ՀՍՍՀ քր. օր.-ի 3-րդ հոդվածը:

³ Տե՛ս ՀՍՍՀ քր. օր.-ի 7-րդ հոդվածը:

2. Այն դործողությունը, որը թեև համընկնում է քրեական օրենքով նախատեսված արարքի հատկանիշներին, սակայն կատարվել է ծայրահեղ անհրաժեշտության վիճակում, այսինքն մի անպիսի վտանգ վերացնելու համար, որը սպառնալիս է եղել սովետական պետության շահերին, հանրային շահերին, տվյալ անհատի կամ այլ քաղաքացիների անձին կամ իրավունքներին, եթե այդ վտանգը տվյալ հանգամանքներում չէր կարելի վերացնել այլ միջոցներով և եթե հասցված վնասը կանխված վնասի համեմատությամբ ավելի նվազ կարևորություն ունի, չի համարվում հանցագործություն:

9. Նրբ չի ապացուցված ամբաստանյալի մասնակցությունը հանցագործության կատարմանը. ՀՍՍՀ քր. գատ. օր.-ի 299 և մյուս միութենական հանրապետությունների քր. դատ. օրենսգրքերի համապատասխան հոդվածները արդարացման դատավճռի հիմքերի թվում սահմանում են նաև արդարացման դատավճիռ կայացնելը, երբ չի ապացուցված ամբաստանյալի մասնակցությունը հանցագործության կատարմանը: Այս հիմքով արդարացման դատավճիռ կայացնելը պայմանավորված է ՀՍՍՀ քր. դատ. օր.-ի 299 հոդվածի այն պահանջով, որ մեղադրական դատավճիռը չի կարող հիմնված լինել ենթադրությունների վրա և կայացվում է միայն այն դեպքում, երբ հանցագործությունը կատարելու մեջ ամբաստանյալի մեղավորությունն ապացուցված է դատական քննության ընթացքում: Նրբ օրենքով սահմանված բոլոր միջոցները ձեռնարկվել են, սակայն չի ապացուցված ամբաստանյալի մասնակցությունը հանցագործությունը կատարելու մեջ, դատարանը կայացնում է արդարացման դատավճիռ:

Ամբաստանյալի մասնակցությունը հանցագործությանը ապացուցված չլինելու պրոբլեմը, որպես արդարացման դատավճռի հիմք անմիջականորեն առնչվում է սոցիալիստական օրինականության պահպանման կարևորագույն ղեկավար սկզբունքներից մեկի՝ անմեղության պրեզումպցիայի հետ:

Անմեղության պրեզումպցիան քրեական դատավարության մեջ օրինական ճանաչում գտած ղեկավար սկզբունք է, որը քրեական դատավարությունում բարդ պրոբլեմ լինելով հանդերձ, արդեն իսկ իր արտահայտությունն է գտել քրեական դատավարական օրենքում: Այս սկզբունքի իմաստը կայանում է հետևյալում. յուրաքանչյուր մեղադրյալ համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունը չի ապացուցված օրենքով սահմանված կարգով:

Անմեղության պրեզումպցիան սովետական արդարադատությունում մեղադրյալի պաշտպանության իրավունքի դատավարական երաշխիքների հիմքն է:

Նրա հակադիր սկզբունքն է մեղավորության պրեզումպցիան, որը խորթ է սովետական արդարադատությանը:

Այս երկու սկզբունքների հակադրությունը պարզ ու որոշակի է դառնում, երբ մենք դրանք համեմատում ենք միմյանց իրենց իրավաբանական արտահայտությամբ:

Մեղավորության պրեզումպցիայի իմաստը կայանում է հետևյալում. յուրաքանչյուր մեղադրյալ համարվում է մեղավոր, քանի դեռ չի ապացուցված նրա անմեղությունը:

Նշված երկու բնորոշումներից ցայտուն երևում է, թե ինչպիսի հակադիր ընկերներ են դրանք:

Անմեղության պրեզումպցիայի սկզբունքը սովետական քրեական դատա-

վարույթյունում ճշմարտությունը բացահայտելու, իսկությունը պարզելու կարևորագույն երաշխիք է:

Այս սկզբունքը արտահայտված է նաև ՍՍՀՄ և միութենական հանրապետությունների քրեական դատավարության հիմունքների 7-րդ և 14-րդ հոդվածներում: «Ոչ ոք չի կարող հանցագործության կատարման մեջ մեղավոր ճանաչվել և քրեական պատժի ենթարկվել այլ կերպ, քան դատարանի դատավճռով» (հոդվ. 7): «Դատարանը, դատախազը, քննիչը և հետաքննություն կատարող անձը իրավունք չունեն ապացուցման պարտականությունը դնելու մեղադրյալի վրա» (հոդվ. 14):

Այս և մի շարք այլ հոդվածներ, մեր կարծիքով, արդեն իրավունք են վերապահում սովետական իրավագետներին առաջարկել այդ սկզբունքը օրենքում արտահայտելու իր ուղղակի բնորոշմամբ:

Երբ մենք օրենքում կարդում ենք, որ դատաքննչական օրգանները իրավունք չունեն ապացուցման պարտականությունը դնելու մեղադրյալի վրա, դա որոշակիորեն նշանակում է, որ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը, չնայած դրա իրավունքը նա ունի: Ինչո՞ւ, որովհետև օրենքի ուժով անձը համարվում է անմեղ, քանի դեռ այն օրգանները, որոնք նրան համարում են մեղավոր, օրենքով սահմանված կարգով չեն ապացուցում նրա մեղավորությունը: Այսպիսով, կտրական է դառնում այն սկզբունքը, որ չապացուցված մեղավորությունը հավասարազոր ու հավասարանիշ է ապացուցված անմեղության:

Այս է արդարացման դատավճիռ կայացնելու հիմքերից մեկի՝ ամբաստանյալի մասնակցությունը հանցագործության կատարմանը ապացուցված չլինելու սկզբնաղբյուրը, որը սահմանված է սովետական քրեական դատավարությամբ:

Արդարացման դատավճիռ կայացնելու այս հիմքը սովետական քրեական դատավարության տեսաբանների կողմից հիմնականում պատկերացվում է միակերպ, սակայն ներկայացնելով իրենից բարդ պրոբլեմ ինչպես մամուլում, նույնպես և իրավաբանական գրականության մեջ, առաջացրել է բանավեճ, որն, անկասկած, արժանի է ուշադրության:

Օրենքը որոշակի է սահմանում, որ անբաստանյալի մեղավորության ու անմեղության հարցի տեսանկյունից սովետական դատարանի դատավճիռը կարող է լինել երկու տեսակ՝ 1. մեղադրական դատավճիռ, 2. արդարացման դատավճիռ:

«Կամ մեղադրանքը ապացուցված է և ամբաստանյալը մեղավոր է, կամ չի ապացուցված և ամբաստանյալը մեղավոր չէ, արդարացված է: Ոչ մի միջանկյալ որոշում այս երկուսի միջև չի կարող լինել»⁴:

Որոշ իրավագետներ թերագնահատում են արդարացման դատավճռի դերը, երբ այն կայացվում է ամբաստանյալի մասնակցությունը հանցագործության կատարմանը ապացուցված չլինելու պատճառաբանությամբ: Այդ տեսակետը պաշտպանողները փաստորեն մեղադրյալին կասկածելի վիճակում թողնելու կողմնակիցներ են: Անրնդունելի է պրոֆեսորներ Գ. Բարսկու և Վ. Արսենևի այն կարծիքը, որ այդ պատճառաբանությամբ կայացված արդարացման դատավճիռը անլուծելի է թողնում մեղավորության կամ անմեղության հարցը:

⁴ М. С. Строгович, Курс советского процесса, 1958, стр. 453.

որ այս դեպքում դրվում է մեղավորությունն ապացուցված չլինելու հարցը, կամ որ այս դեպքում ամբաստանյալը չի ճանաչվում մեղավոր, բայց չի ճանաչվում նաև անմեղ⁵:

Նման կարծիքը ճիշտ է և չի բխում օրենքի այն որոշակի պահանջից, որ յուրաքանչյուր դատավճռի, այդ թվում նաև արդարացման դատավճռի հիմնական հատկանիշներից մեկը նրա որոշակի ու կատեգորիկ լինելն է: Օրենքը չի թույլատրում արդարացման դատավճռի մեջ մտցնել այնպիսի ձևակերպումներ, որոնք կասկածանքի տակ են դնում արդարացվածի անմեղությունը (ՀՍՀՄ քր. դատ. օր.-ի 305 հոդված, ընդգծումը մերն է—Խ. Հ.):

Վ. Արսենևը և Գ. Բարսկին գտնում են, որ այս դեպքում «օրենքն ասում է մեղադրանքը ապացուցված չլինելու և ոչ թե մեղադրյալի անմեղության մասին»⁶:

Այսպիսով, կարելի է եղրակացնել, որ օրենքը չի սահմանում արդարացման դատավճռի տարբեր տեսակներ, այլ միայն թվարկում է այն հիմքերը, որոնց առկայությունը դեպքում դատարանը պետք է կայացնի արդարացման դատավճռի: Օրենքը չի նշում, որ տարբեր հիմքերով կայացված արդարացման դատավճռներն ունեն տարբեր հետևանքներ: Արդարացման հետևանքները ամբաստանյալին անմեղ ու անպարտ ճանաչելու տեսակետից բոլոր դեպքերում նույնն են. 1. Անձի լրիվ ռեաբիլիտացիա, 2. Քրեական պատասխանատվության կանչվածի բացարձակ անմեղության հաստատում: Օրենքը միայն նշում է, որ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ արդարացնելիս քաղաքացիական հայցը թողնվում է առանց քննարկման, իսկ մյուս երկու դեպքերում՝ մերժվում է:

Անհրաժեշտ է ճիշտ կլինի, եթե հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ արդարացման դատավճռի կայացնելիս քրեական գործը քննող դատարանը միաժամանակ լուծի նաև քաղաքացիական հայցի հարցը, որովհետև այդ դատարանը ավելի քան ծանոթ է գործի բոլոր հանգամանքներին և նրա համար ավելի զուրկին կլինի այդ հայցի ճիշտ լուծումը:

Արդարացման դատավճռի օրինականությունն ու հիմնավորվածությունը. սովետական քրեական դատավարական օրենքը պահանջում է, որ դատարանի դատավճիռը լինի օրինական ու հիմնավորված:

ՀՍՀՄ քր. դատ. օր.-ի 293 հոդվածը դատարաններին ներկայացնում է հենց այդ պահանջը, որը հավասարապես վերաբերում է նաև արդարացման դատավճռին:

Արդարացման դատավճռի օրինական և հիմնավորված լինելու պահանջը անմիջականորեն բխում է սովետական քրեական դատավարության խնդիրներից, որոնք շարադրված են քրեական դատավարության հիմունքների 2-րդ հոդվածում:

Արդարացման դատավճիռը պետք է լինի ճշմարիտ, որը ընդգրկում է երկու միմյանցից անբաժանելի կողմեր կամ հատկություններ: 1. Դատավճռի օրինականությունը, 2. Դատավճռի հիմնավորվածությունը:

⁵ Տե՛ս Բ. Արսենև և Գ. Բարսկին, Արդարացման դատավճռի գանգատարկումը, «Советская юстиция» ամսագրի 1941 թ. № 15, էջ 8—9:

⁶ Վ. Արսենև և Գ. Բարսկին, «Известия» թերթի 1968 թ. № 5:

Արդարացման դատավճռի օրինականությունը նշանակում է, որ այն պետք է կայացվի օրենքի հիման վրա, ինչպես քրեական օրենքի, նույնպես և քրեական դատավարական օրենքի ճիշտ կիրառմամբ:

Օրենքի այն պահանջը, որ արդարացման դատավճիռը պետք է լինի հիմնավորված, նշանակում է, որ այն պետք է ճիշտ պարզի դործով արդարացման փաստերը, նրա փաստական հանգամանքները: Դատավճռի հիմքում պետք է դրվի ճշմարտությունն ու իսկությունը, այն ինչ իրականում տեղի է ունեցել: Արդարացման դատավճիռը հիմնավորված է, երբ՝ ա) Անձին անպարտ ճանաչելու, նրան անմեղ ճանաչելու մասին դատարանի համոզմունքը հիմնավորված է դատական նիստում քննության առնված փաստերով, և դատավճռում բերված են արդարացման տրամաբանական մոտիվները: բ) Արդարացման մասին դատարանի եզրակացությունները ամրացված են մեղադրանքը հերքող ապացույցներով և այդ ապացույցները ընդգրկում են արդարացման համար բոլոր էական հանգամանքները: գ) Արդարացման մասին դատարանի եզրակացությունները միմյանց չեն հակասում, կասկածանքի տակ չեն գնում արդարացվածի անմեղությունը:

Եթե արդարացման դատավճիռը չի համապատասխանում վերը նշված պահանջներին, ապա այն հիմնավորված չէ: Չի կարելի պատկերացնել օրինական արդարացման դատավճիռ, եթե այն հիմնավորված չէ և ընդհակառակը. չի կարելի պատկերացնել հիմնավորված արդարացման դատավճիռ, եթե այն օրինական չէ:

Դատավճռի օրինական և հիմնավորված լինելու պահանջը բխում է սովետական քրեական դատավարության հիմնական սկզբունքներից և պայմանավորված է առաջին հերթին սոցիալիստական օրինականության սկզբունքով:

Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը մերժեց Ա. Յա. Վիշինսկու այն տեսությունը, որ անձի նկատմամբ կարելի է դատավճիռ կայացնել՝ «երկու անգամ երկու հավասար է մոտավորապես չորսի» սկզբունքով:

Ժամանակակից սովետական իրավագիտությունը ճշմարտացիորեն գրտնում է, որ ինչպես «հավանականորեն» դատապարտելու, այնպես էլ «հավանականորեն» արդարացնելու սկզբունքը անընդունելի է, որովհետև այն ինքնին սոցիալիստական օրինականության ժխտում է նշանակում:

Որքան էլ բարդ լինի ճշմարտացիությանն ու իսկությանը հասնելու պրոբլեմը դատավճիռը կայացնելիս, այնուհանդերձ դատավճռի օրինական ու հիմնավորված լինելու պահանջը պետք է մնա անսասան: Ոչ մի հանցագործ չպետք է խուսափի արժանի դատավճռից, և ոչ մի ազնիվ մարդ չպետք է արժանանա մեղադրական դատավճռի: Դատական ռեպրեսիան պետք է հարվածի միայն հանցագործին:

Արդարացման դատավճռի հետ առնչվում են նախաքննության ու դատաքննության հարաբերակցության մի շարք հարցեր:

Կասկածից վեր է, որ երբ դատարանը կայացնում է արդարացման դատավճիռ, այդ նշանակում է, որ նա տվյալ դեպքում չի համաձայնվում քննչական օրգանի եզրակացությունների հետ, հերքում է այն, մերժում մեղադրանքը: Արդարացման դատավճռով դատարանը հայտարարում է, որ քննչական օրգանի եզրակացությունները տվյալ գործով, տվյալ անձի նկատմամբ սխալ

են: Այսպիսով, դատարանը բոլոր դեպքերում որոշակի գնահատական է տալիս կատարված նախաքննությանը:

Սակայն արդարացման դատավճիռ կայացնելիս չհամաձայնվելով քննիչի ու դատախազի եզրակացություններին, միշտ չէ, որ դատարանը կատարված նախաքննությունը համարում է խոտան կամ անորակ:

Կան արդարացման դեպքեր, երբ իրոք նախաքննությունը կատարված է մեծ թերություններով: Այս դեպքերում արդարացման դատավճռի պատճառը հանդիսանում է անորակ նախաքննությունը: Բայց կան նաև արդարացման դեպքեր, երբ նախաքննությունը կատարված է բարեխղճորեն, նախաքննությունում հավաքված են բոլոր մեղադրող և արդարացնող ապացույցները: Քննիչը, դատախաղը եկել են այն կարծիքին, որ անձը մեղավոր է, իսկ դատարանը կոլեկտիվ կարգով, ինքնուրույն գնահատելով ապացույցները, դալիս է այն եզրակացության, որ չի կարելի մեղադրանքը հիմնավորված համարել, որ դրոծով լրացուցիչ նախաքննության ոչ մի անհրաժեշտություն չկա, քննչական օրդանների կողմից բարեխղճորեն հավաքված են բոլոր ապացույցները, սակայն քննիչի ու դատախազի կարծիքը այն մասին, որ անձը մեղավոր է, ճիշտ չէ:

Այսպիսի դեպքերում խոսել քննչական խոտանի մասին, մեր կարծիքով, տեղին չի լինի: Այստեղից էլ հնարավոր չէ համաձայնվել այն կարծիքին, որ քննչական աշխատանքի որակի բարձրացումը կարող է հանգեցնել արդարացման դատավճիռների վերացմանը, բացառմանը: Արդարացման դատավճիռը կա և կլինի այնքան ժամանակ, քանի դեռ դոյություն ունի սովետական դատարանը:

Իրավացի է պրոֆեսոր Մ. Ս. Ստրոգովիչը, երբ նշում է՝ «Ինչ դատարան է այն դատարանը, որը չի կայացնում արդարացման դատավճիռներ: Ի՞նչ դատարան է այն դատարանը, որի առջև ոչ մեկը չի կարող արդարանալ: Իհարկե, այդպիսին չէ մեր սովետական դատարանը: Ուստի քանի գոյություն ունի Սովետական դատարանը, նրա կողմից կկայացվեն ոչ միայն մեղադրական, այլև արդարացման դատավճիռներ»⁷:

Սովետական որոշ տեսաբաններ այն կարծիքն են հայտնում, որ արդարացման դատավճիռները գնալով նվազում են: Օրինակ՝ Ֆ. Ն. Ֆատկուլինը տարբեր ժամանակներից բերելով թվական տվյալներ, եզրակացնում է, որ սովետական քրեական դատավարությունում անշեղորեն նվազում է արդարացման դատավճիռների տեսակարար կշիռը⁸:

Մենք չենք բաժանում Ֆատկուլինի այդ կարծիքը և համամիտ ենք պրոֆ. Ստրոգովիչի այն պնդմանը, որ ճիշտ չի լինի խոսել արդարացման դատավճռի նվազեցման ինչ-որ տեղեկների կամ օրինաչափության մասին ընդհանրապես: Անկասկած, կնվազեն այնպիսի արդարացման դատավճիռները, որոնց պատճառը նախաքննության ցածր որակն է, քննչական խոտանը, սակայն այնպիսի արդարացման դատավճիռների վերաբերյալ, որոնք կայացվում են ապացույցների այլ գնահատման հետևանքով, այդ նույնը անհնար է պնդել: Հնարավոր է, որ այսպիսի դեպքերում արդարացման դատավճիռների թիվը նույնիսկ ավելանա:

7 Տե՛ս Сборник «Вопросы защиты по уголовным делам», 1967 թ., էջ 65:

8 Ֆ. Ն. Ֆատկուլին, Մեղադրանքը և դատարանի դատավճիռը, էջ 346:

Սովետական դատարանի արդարացման դատավճիռը ունի հասարակական-քաղաքական մեծ նշանակություն: Այդ դատավճռի բարոյական ազդեցությունն ու նշանակությունը նույնքան մեծ է, որքան և մեղադրական դատավճռի ազդեցությունն ու նշանակությունը և եթե արդարացման դատավճիռը օրինական է ու հիմնավորված, չի կարող առաջ չբերել մեր հասարակության կողմից մեծ հարգանք՝ գործը քննող դատարանի նկատմամբ: Իրավացիորեն արդարացվածի և ամբողջ հասարակայնության դիտակցության մեջ միշտ էլ կենդանի ու վառ կմնա մեր պետության անունից սոցիալիստական արդարադատության այդ կարևորագույն փաստաթղթի հրապարակումը:

Ճշմարտությունը հաղթանակում է, երբ դատարանը իրավացիորեն վերականգնում է մարդու բարի և ազնիվ անունը:

ОБ ОПРАВДАТЕЛЬНОМ ПРИГОВОРЕ СОВЕТСКОГО СУДА

Р. М. ОГАНЕСЯН

Р е з ю м е

Приговор советского суда может быть обвинительным или оправдательным.

Правильно осуществить советское социалистическое правосудие— это, в первую очередь, означает: постановить обвинительный приговор в отношении действительного виновника в совершении преступления или вынести оправдательный приговор в отношении лица, против которого необоснованно возведено уголовное дело или необоснованно предъявлено обвинение. Третьего вида приговора в советском уголовном процессе нет.

Оправдательный приговор выносится по следующим основаниям:

1. Когда не установлено событие преступления.
2. Когда в деянии подсудимого нет состава преступления.
3. Когда не доказано участие подсудимого в совершении преступления.

Во всех этих случаях, вынося оправдательный приговор, суд констатирует невиновность подсудимого, полностью реабилитирует его. В соответствии с этими последствиями категорически воспрещается включить в оправдательный приговор формулировки, ставящие под сомнение невиновность подсудимого. Важнейшим свойством оправдательного приговора является его определенность. Если невиновность подсудимого оставлена в подозрении, в сомнении, значит такой оправдательный приговор необоснован и незаконен.

Оправдательный приговор как форма осуществления советского социалистического правосудия будет существовать всегда, пока существует советский суд.